խաղաղութիւնը կը հաստատուի այն ժամանակ, երբ Գանձակում և Ակերա-նում դիրք կը բռնեն մեր զօրքերը և երբ մենք ամենալաւ բարեկամներ կը դառնանք և հայն ու թաթարը ամենից աւելի հաշտ ու բարեկամ կը լինեն ամէն տեսակէտից:

Մենք կը տիրանանք մեր իրաւունքին: Մենք չե՛նք ձգտել տիրանալ ուրիշների հայրենիքին: Մեր բանակի զինուորները պիտի պաշտպանեն այս երկրի անկախութիւնը և զէնքի ուժով պիտի հաստատեն այս կառավարութեան իշխանութիւնը այնտեղ, ոչ աւելի և ոչ պակաս, որի մասին յայտարարել է այս կառավարութիւնը:

Մի նոր բարեկամ է երևացել, որին չենք դիմել, բայց որն ուզում է զօռով իր բարեկամութիւնը կապել մեր վրին: Նա գրաւում է մեր հայրենիքի մի մասը արիւնհեղութեան վերջ տալու համար և կցում Ազրբէջանին: Այս անգամ կռիւ է ռուսների դէմ խորհրդային դիմակի տակ, որն աւելի դաժան է, քան հին կարգերը, նեղմիտ է և բթամիտ ու ոչինչ չի կարողանում ըմբռնել: Հնի նման սա էլ իր գերեզմանն է փորում: Նա չի հասկանում, թէ ի՞նչ է ինքը միջազգային չափով: Նա չի կարողանում ըմբռնել, որ յաղթում է նա, ո՛վ զարգացած է մտաւորապէս և տնտեսապէս:

Խորհրդային Ռուսաստանը, այդ ցնցոտին, մտքով, հոգով և էութեամբ աղքատ այդ երկիրը ցանկանում է անցնել Հնդկաստան՝ օժանդակ ունենալով Մուստաֆա Քէմալի ողորմելի զօրքերը: Հոտառութիւնը կորցրած այդ երկիրը գալիս է սպառնալու մեզ, և մենք պարտաւորուած ցոյց կը տանք մեր կերպարանքը, յարգել կը տանք մեր ժողովրդի իրաւունքները, թէև նա այժմ չի յարգում այդ և ցանկութիւն էլ ունի այն խորտակելու: Նենգամիտ և դաժան՝ Խորհրդային Ռուսաստանը, թիւրքերի հետ միացած և զինակցած, այդ անկերպարան մարմինը յետադէմ է հին Ռուսաստանի նման: Նա դաշնակցել է Տաճկաստանի հետ: Սոցիալիզմը կապուել է կարմիր արեան հետ: Յետադէմ ուժն է, որ գալիս է առժամապէս կասեցնելու մեր յաջողութիւնը: Մենք այս, ինչպէս նաև միւս ուժերի դէմ ևս կը պայքարենք: «Ռուս» հմայքից ազատուեցինք: Ռուսական սոցիալիզմի այդ ներկայացուցիչները ամենախաւարամիտ ներկայացուցիչներն են սոցիալիզմի: Նրանք հին Ռուսաստանի առաքինութիւններն ընդունել են նւազեցնելով, իսկ մոլութիւնը՝ աճեցնելով: Մենք ամենածանր պայմանների մէջ ցոյց տուինք թիւրքին և թաթարին, որ այս հողը Հայաստան է և որ հայ ժողովուրդը ցանկանում է ազատ լինել: Այժմ մենք նոյնը ցոյց կը տանք նաև ռուսին: Մենք պէտք է բարձր յայտնենք ամենքին, որ բարեկամ ենք այն ռուսին, որ կովկասեան շղթայից այս կողմ չի անցնի և բարեկամ ենք այն ռուսին, որ Հայաստանի սահմանից այս կողմ չի գալիս (բուռն ծափահարութիւն):

Գիտենք, ամենայայ ընթացքում մեր թշնամիները պիտի պատրաստուեն մեր հանգստութիւնը խախտելու: Մեր թշնամիները նախանձում են, որ սորկութիւնից նոր բարձրացած այս երկիրը ուժեղանում է: Մի անգամ ընդ միշտ պէտք է ապացուցենք, որ անառիկ է մեր երկիրը, գիտենք պաշտպանել մեր ազատութիւնը, մինչև համոզուեն, որ այս ժողովուրդը ազատ ապրել է ցանկանում, մինչև որ համոզուեն, որ այս երկիրը անկախ պէտք է լինի: Մեր իրաւունքի զիջումով չենք կարող հասնել մեր նպատակին: Ուժով կարող ենք մեր անվիճելի իրաւունքը պաշտպանել: Մենք օժանդակեցինք Տաճկաստանի, այդ ոճիրների գարհուրելի բոյնի, կործանմանը: Նաև մեր ուժերի մասնակցութեամբ կործանուեց ասիական միւս բռնակալ պետութիւնը՝ Նիկոլայ առաջինի և Նիկոլայ երկրորդի բռնակալ Ռուսաստանը: Նոյնպէս կը խորտակուեն թշուառ ռուսական գլուխները: Հերթական խնդիր է արևելեան և